



«.....» 201 թ.

...../.....

ՀՐԱՄԱՆ N 73-Լ

30 մարտի 2015 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 222-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության մեդալներ ստեղծելու, մեդալների ձևերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի N 222-Լ հրամանի վերնագիրը «մեդալների» բառից հետո լրացնել «և հուշամեդալի» բառերով.

2. Հրամանով հաստատված հավելվածում.

1) վերնագիրը «մեդալների» բառից հետո լրացնել «և հուշամեդալ» բառերով.

2) հավելվածը լրացնել 8-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

«8. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության ոսկե հուշամեդալով պարգևատրվում են անհատները կամ կազմակերպությունները Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, հայրենիքին և սփյուռքին մատուցած ծառայությունների, սփյուռքի համայնքների միջև և հայրենիքի հետ կապերի ամրապնդման, հայապահպանության գործում նշանակալի ներդրում ունենալու, տարբեր բնագավառներում լայնածավալ ծրագրերի իրականացման, արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև բարեգործական և հասարակական ակտիվ գործունեության համար»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՐԱՄԱՆ N - L

-ը մարտի 2015 թ.

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 222-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության մեդալներ ստեղծելու, մեդալների ձևերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի N 222-Լ հրամանի վերնագիրը «մեդալների» բառից հետո լրացնել «և հուշամեդալի» բառերով.

2. Հրամանով հաստատված հավելվածում.

1) վերնագիրը «մեդալների» բառից հետո լրացնել «և հուշամեդալ» բառերով.

2) հավելվածը լրացնել 8-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

«8. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության ոսկե հուշամեդալով պարգևատրվում են անհատները կամ կազմակերպությունները Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, հայրենիքին և սփյուռքին մատուցած ծառայությունների, սփյուռքի համայնքների միջև և հայրենիքի հետ կապերի ամրապնդման, հայապահպանության գործում նշանակալի ներդրում ունենալու, տարբեր բնագավառներում լայնածավալ ծրագրերի իրականացման, արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև բարեգործական և հասարակական ակտիվ գործունեության համար»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ